ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

1 հունիսի շաբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

72
(2922)

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԿԱՍԿԱԾԵԼԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐԸ

ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի նախկին նախագահ Արմեն Ղուլարյանի սկանդալային ազատումից հետո Կառավարությունը դժվարությամբ, բայց կարճ ժամանակում նրան փոխարինող գտավ:

Քաղաքաշինության ոլորտում երկարամյա փորձ ունեցող Ղուլարյանին փոխարինեց Հայաստանի ճարտարապետության եւ շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ռեկտոր Եղիազար Վարդանյանը: Վարդանյանը այս պաշտոնին նշանակվել է 2020 թվականին:

Այսպիսով՝ներկայացնենք, թե ինչ ունեցվածք է հայտարարագրել նորանշանակ քաղշին կոմիտեի նախագահը:

Եղիազար Վարդանյանը հայտարարագրել է միանձնյա սեփականությամբ 2 անշարժ գույք՝ անհատական բնակելի տուն եւ հողամաս:

Անհատական բնակելի տունը գտնվում է Երեւանում եւ ձեռք է բերել 2012 թվականին, երբ Ճարտարապետության եւ շինարարության Հայաստանի ազգային համալսարանի (ՃՇՀԱՀ) աշխատակազմի ղեկավարն էր, որտեղ նույն պաշտոնում աշխատել է 2006-2014 թվականներին: Իսկ հողամասը ձեռք է բերել 2011 թվականին. այն գտնվում է Կոտայքի մարզի քաղաք Ծաղկաձորում:

Ստացվում է՝ Վարդանյանը ունեցվացքի զգալի մասը կուտակել է նշված համալսարանում աշխատակազմի ղեկավար եղած ժամանակ:

Եղիազար Վարդանյանը տրանսպորտային միջոց չի հայտարարագրել:

Հայտարարագրից հասկանում ենք, որ Կոմիտեի նախագահը «ՄերԱրմինվեսթ» ՍՊԸ-ից, որ բնակարանների կառուցապատող է, ունի փոխառություն, սակայն այդ մասին, հայտարարագրերից ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդի մասին, պաշտոնի ստանձնման կամ դադարեցման օրվա դրությամբ բաժնում ոչ մի հիշատակում չկա: Ստացվում է՝Վարդանյանն ունի եւս մեկ անշարժ գույք, որն արժե 27 մլն 109 հազար դրամ, սակայն հայտարարագրում պատշաճ հիշատակում չկա:

Վարդանյանի կանխիկ դրամական միջոցները կազմել են 14 հազար 400 եվրո, 26 հազար 800 դոլար եւ 39 մլն 500 հազար դրամ գումար:

Հետաքրքիրն այն է, որ այս գումարների աղբյուրը եւս հիշատակված չէ:

Գումարի քանակը կասկած է առաջացնում, քանի որ հաշվետու ժամանակաշրջանի՝ 2023 թվականի եկամուտները կազմել են ընդամենը 6 մլն 112 հազար դրամ, որն էլ ստացել է համալսարանից, որտեղ աշխատել է գրեթե 17 տարի:

Սակայն նման համեստ պաշտոնում աշխատող անձը, դժվար թե նման գումարներ կարողանար կուտակել:

Իշխող ՔՊ խմբակցության ներսում շատ հարցերում հակասությունները գնալով խորանում են: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ մայիսի 28-ին Վեհափառի մուտքը Սարդարապատի հուշահամալիր խոչընդոտելը նոր կրքեր է բորբոքել իշխող ֆրակցիայի ներսում: Նրանցից շատերը թե՛ առանձին զրույցներում, թե՛ նիստերի ժամանակ իրենց դժգոհությունն են հայտնել ու հասկացրել են՝ Վեհափառի մուտքը խոչընդոտելն իսկապես անթույլատրելի էր ու, ըստ էության, քայլ էր Եկեղեցու դեմ: Չնայած ՔՊ «վերնախավի» արդարացումներին, թե՝ ոստիկաններն ընդամենը որոշ պարզաբանումներ ստանալու նպատակով են կանգնեցրել Վեհափառին, ՔՊ-ական պատգամավորների մեծ մասը ցույց է տվել, որ հաշտ չէ այդ միջադեպի հետ եւ դա համարում է քայլ՝ ընդդեմ Հայոց եկեղեցու: Սակայն, մեծ մասամբ նրանք այս մասին խոսում են մտերմիկ զրույցներում, իսկ հրապարակավ 180 աստիճանով տարբեր բաներ են ասում:

Երեկ դատավոր Հարություն Մանուկյանը պետք է հրապարակեր ՀՀ նախկին ոստիկանապետ Լեւոն Երանոսյանի գործով վճիռը, սակայն այն հետաձգվել է եւ կհրապարակվի հունիսի 3-ին: Պարզվում է՝ այս վճռից առաջ ԲԴԽ-ն, Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ Դատական դեպարտամենտի պատրաստած ֆիլմի հիման վրա, դատավոր Հարություն Մանուկյանի վերաբերյալ կարգապահական վարույթ էր հարուցել ու օրեր առաջ կարգապահական վարույթը կարճել է, ու չի բացառվում, որ վարույթի կարճմամբ իշխանությունները ակնկալում են նախկին պաշտոնյաների մասով իրենց համար ցանկալի որոշումներ ստանալ դատավորներից. ուստի չի բացառվում՝ Լեւոն Երանոսյանի մասով խիստ ու ծանր որոշում լինի: Դատական համակարգում վստահ են՝ 8-9 տարվա ազատազրկումն անխուսափելի է: Հիշեցնենք, որ 2018 թվականի «հեղափոխության» օրերին Բաղրամյան պողոտայում լուսաձայնային նռնակ կիրառելու առիթով հարուցված քրեական գործով է նա մեղադրյալի աթոռին: Օրեր առաջ Երանոսյանն իր վերջին խոսքն ասաց դատարանում: Մեղադրող դատախազը պահանջել է 11 տարվա ազատազրկում: Դատավոր Հարություն Մանուկյանը գնաց խորհրդակցական սենյակ՝ որոշում կայացնելու: Հիշեցնենք, որ Հայաստանի նախկին փոխոստիկանապետ, ոստիկանության զորքերի նախկին հրամանատար Լեւոն Երանոսյանը մեղադրվում է հեղափոխության օրերին ոստիկանության կողմից հատուկ միջոցներ կիրառելու ժամանակ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու մեջ: Լեւոն Երանոսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա հատուկ միջոցների գործադրմամբ, դիտավորությամբ կատարել է այնպիսի գործողություններ, որոնք ակնհայտորեն դուրս են եկել իր լիազորությունների շրջանակից եւ էականորեն վնասել են քաղաքացիների իրավունքներն ու օրինական շահերը, ինչպես նաեւ անզգուշությամբ առաջացրել են ծանր հետեւանքներ: Ոստիկանության զորքերի նախկին հրամանատար, ոստիկանության գեներալ-լեյտենանտ Լեւոն Երանոսյանի փաստաբան Տիգրան Սաֆարյանը, վկայակոչելով Երանոսյանի ցուցմունքը, փոխանցել էր՝ հեղափոխության օրերին Երեւանի թե՛ Բաղրամյան պողոտայում, թե՛ Արցախի փողոցում ստեղծված իրադրությունն այնպիսին էր, որ կային հատուկ միջոցներ կիրառելու պայմաններ, հիմքեր, եւ այդ միջոցները կիրառվել են: Հավելենք, որ նույնպիսի միջոցներ կիրառվել են ներկա իշխանության օրոք նաեւ անցած տարի սեպտեմբերին՝ կառավարության դիմաց, սակայն որեւէ պատիժ ու քրգործ չկա:



Գյումրիում երեկվանից աժիոտաժ է: Ինչպես արդեն հայտնի է, այսօր Բագրատ Սրբազանը եւ նրա աջակիցները ավտոերթով գնալու են դեպի Գյումրի, որտեղ միջոցառում եւ արդեն երեկոյան հանրահավաք է սպասվում: Հանրահավաքը տեղի կունենա Գյումրիի Թատերական հրապարակում՝ 18:00-ին: «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրների փոխանցմամբ՝ Գյումրիում Բագրատ Սրբազանի գալուն ընդառաջ՝ երեկվանից ակտիվ մթնոլորտ է, քաղաքացիները պատրաստվում են նրան դիմավորելուն: Տեղեկացանք, որ մի խումբ գյումրեցիներ պատրաստվում են Սրբազանին եւ նրա աջակիցներին դիմավորել: Այնտեղ է լինելու նաեւ Շիրակի թեմի առաջնորդ Միքայել Սրբազանը, որը եւս ընդառաջ է գալու Բագրատ Սրբազանին: Ինչպես մեր աղբյուրներն են հայտնում, երեկվանից քաղաքում ոստիկանական ուժերի կուտակում է սկսվել:

ԶՐՈՒՅՑ

«ՉԵՆ ՀԱՄԿԱՆՈՒՄ՝ ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ». ՍԵՖԻԼՅԱՆ

ArmLur.am-ը ԱԳՆ շենքի մոտ այսօր զրուցել է ԱԺԲ անդամ Ժիրայր Սէֆիլյանի հետ: Ժիրայր Սէֆիլյանի հետ զրուցել ենք Բագրատ Սրբազանի շարժման և ակնկալիքների մասին:

-Պարոն Սեֆիլյան, Բագրատ Սրբազանը ասաց, որ մայիսը հունիս չի դառնալու եւ իշխանափոխությունը շուտ է լինելու, սակայն, կարծես թե, իշխանականները լուրջ են տրամադրված, չեն ուզում հրաժարական տալ: Ի՞նչ կարծիք ունեք Դուք այս մասին: Ի՞նչ քայլեր են անհրաժեշտ, որ իշխանափոխությունը շուտ տեղի ունենա:

-Ես կարծում եմ՝ շուտ էլ լինելու է. մայիսի 26-ից հետո կարող ենք ասել, մեր երկրում երկիշխանություն է, եւ մայիսի 26-ին հաջորդող օրերում ամեն օր, ինչ-որ տեղի է ունենում, ապացուցում է դա: Խորհրդանշական էին մայիսի 28-ին տեղի ունեցած գործողությունները, եւ ամբողջ աշխարհի առաջ ապացուցվեց, որ գործող իշխանությունները, Փաշինյանի գլխավորությամբ, չեն տիրապետում իրավիճակին: Այսինքն, երբ առավոտ 8:30 արտգործնախարարության բոլոր դեսպաններին հրավիրում են կառավարության շենքի առաջ՝ ուղեւորվելու դեպի Սարդարապատ, բայց դա տեղի չի ունենում, աշխարհը հասկանում է, որ տվյալ կառավարիչը արդեն ի վիճակի չէ ոչնչի, չի տիրապետում իրավիճակին: Մայիսի 28-ին տեղի ունեցավ նաեւ հետաքրքիր, անշուշտ՝ մի խայտառակ դեպք, բայց իր քաղաքական եւ ազգային բովանդակությամբ հետաքրքիր այն իմաստով, որ այդ երեւույթը դատապարտեց հայ ժողովրդի ամբողջ շրջանակը: Այդ երեւույթը մի կողմ թողեց բազմաթիվ տարաձայնություններ եւ դրա դեմ ամբողջ հայությունը համախմբվեց: Մենք գիտենք, որ մեր բոլոր հաստատությունները «հիվանդ» վիճակի մեջ են եղել այս տարիների ընթացքում՝ ներառյալ մեր եկեղեցին, որպես հաստատություն: Սակայն, մենք տեսնում ենք այս օրերին, նաեւ Սրբազանի այս ուղղամիտ գործունեությամբ, եւ ինչու չէ նաեւ գործող իշխանությունների հիմար արարքներով, որ հեղինակության վերականգնման ընթացք է սկսվել, որը շատ գովելի է, որովհետեւ գլխավոր պատճառը, որ այս տարիների ընթացքում մեզ չէր հաջողվում մեր ժողովրդին մոբիլիզացնել, հեղինակությունների բացակայությունն էր ամեն իմաստով՝ եւ որպես հաստատություններ, եւ որպես նահատներ: Ինչ վերաբերում է՝ «հունիս կդառնա՞, թե՞ չէ», ես կարծում եմ, որ մեր ժողովուրդը պետք է համբերատար մոտենա այս ընթացքին, բայց վստահ լինելով, որ շարժումը հասնելու է հաջողության: Առաջնահերթորեն Փաշինյանի հեռացումով պիտի սկսվի, որովհետեւ ամեն մի օրը, որ նա մնում է, անընդհատ կորուստի օր է. ուստի ես վստահ եմ, որ Սրբազանը արագացված ռեժիմի մեջ է, այնպես չէ, որ դանդաղ է ընթացքը: Շատերը հավանաբար չեն հասկանում, որովհետեւ բացի նրանից, ինչ երեւում է, կան գործընթացներ, որոնք չեն երեւում. ես կարծում եմ, որ շատ մոտ է փոփոխությունը: Անշուշտ, այս օրերին պիտի կենտրոնանանք առաջնային քայլի՝ Փաշինյանի հեռացման վրա, եւ ինչ է պետք, որ դա շուտ լինի. մեզ մոբիլիզացիա է պետք: Այս փուլում դեռ պետք չէ, որ խոսենք անցումային կառավարության մանրամասներից, կգա դրա ժամանակը եւ կխոսենք:

Զրուցեց ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆԸ

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԴԱՏԱՐԱՆՆ ԱՐԴԱՐԱՑՐԵՑ ԵՐԲՈՐԴ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Այսօր դատարանը արդարացրեց երրորդ նախագահին՝ հերքելով դատախազության ապացույցները, թե նախագահության տարիներին Սերժ Սարգսյանը կազմակերպել է պետբյուջեից մոտ կես միլիարդ դրամի հափշտակությունը:

ԱՅՍ ՊԱՅՔԱՐՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՉԷ

Շարժման ընթացքը, փուլայնությունը, ակտիվությունը, քայլերը, ժամկետները եւ այլ բաներ կարող են փոփոխվել: Սա լրիվ բնական պրոցես է: Բայց շարժման ելքը չի կարող «եթե» ունենալ: Այս մասին իր ֆեյսբուքյան էջում գրել է «Այլընտրանքային նախագծեր» խմբի անդամ Վահե Հովհաննիսյանը:

«Ուղղակի պետք է գիտակցել, թե ինչ ասել է պարտություն: Սա նշանակում է Ալիեւի հաղթարշավ, անդառնալի զիջումներ եւ անասնական մթնոլորտ Հայաստանում:

Հայաստանում առաջանում է համակեցության սուր պրոբլեմ. սա ամենավտանգավորն է, հազար անգամ ավելի վտանգավոր, քան Ալիեւի պահանջները: Հարյուր հազարավոր մարդկանց համար անհնար է դառնում ապրել մի երկրում, որտեղ վերջին հարյուրամյակի ամենախոշոր կորուստներից ու պատմական աղետից հետո այդ աղետի հեղինակ իշխանությունը ուժով եւ մանիպուլյացիաներով պահում է իր իշխանությունը, որտեղ նվիրական բոլոր երազանքները զրոյացվում են, որտեղ Արցախից բռնի տեղահանված քաղաքաբնակների են կալանավորում, որտեղ բերետավորները ոհմակով հարձակվում են ընդվզող մարդկանց վրա, որտեղ Վեհափառի մուտքը կարող են ինչ-որ «միլիցեք» փակել, ու քաղաքական ու գերատեսչական ղեկավարությունն արդարացնի դա, որտեղ պաշտոնյաները կարող են դոշ տալ ու «մեծարգո»-ով դիմել այն վարչապետին, որի օրոք անհաշվելի կորուստներ ենք ունեցել եւ ունենում: Իմ ընկեր, դեսպան Վ. Մելիքյանի ձեւակերպմամբ՝ Հայաստանը կարող է վերածվել հարեւանների ֆուռերը սպասարկող քարվանսարայի՝ աներազանք, անիմաստ:

Հարյուր հազարավոր մեր քաղաքացիներ չեն համակերպվելու այս սցենարի հետ, ու սա լինելու է մեր ժողովրդի պատմության մեջ խոշորագույն ու ողբերգական մի գաղթ:

Նիկոլին սա ձեռնտու է, չէ՞ որ պետությունը, նրա պատկերացմամբ, միայն լավ ապրելու համար է: Ինքը լավ կապրի, մի փոքր խումբ լավ կապրի, մնացածը կդառնան քարվանսարայի աշխատողներ:

Հարյուր հազարավոր մարդիկ չեն կարողանալու ապրել մի երկրում, որտեղ պետության եւ «լավ ապրելու» նշաձողը իջեցված է շատ ուտելու մակարդակին:

Այս տրամաբանությամբ մարդկության պատմության մեջ զրկանքների գնով արված բոլոր գյուտերը, հայտնագործությունները, արվեստի ստեղծագործությունները, համաշխարհային արժեքների ստեղծումն անիմաստ էին, որովհետեւ Ջորդանո Բրունոյից սկսած բոլորը պետք է մտածեին միայն լավ ապրելու մասին: Իսկ Վան Գոգը սոված գլուխգործոցներ ստեղծելու փոխարեն պետք է լավ ռոճիկով մալյար աշխատեր հարեւանի տանը՝ ըստ Նիկոլի:

Գործող իշխանության աշխարհընկալումը ռեստորանի մենյուի շրջանակներում է: Նրանց Աստվածաշունչը եւ Սահմանադրությունը երկրի մենյուն է:

Հարյուր հազարավոր մեր քաղաքացիների ընտանիքների համար «մեծարգո»-ի աշխարհընկալումը եւ նրան մահակով, մանդատով կամ գրչով պաշտպանող զանգվածը դառնում է օրգանապես անընդունելի: «Եթե»-ն իրոք շատ հստակ է: Շարժման հաղթանակը երկրում նոր բարքերի ու նոր մթնոլորտի հաղթանակն է՝ ներքին հաշտության մեծ հնարավորությամբ: Հակառակ պարագայում պարզապես չենք կարողանալու այստեղ ապրել:

Այնպես որ, այս պայքարը իշխանության համար չէ, այլ՝ Հայաստանում ապրելու հնարավորության: Սա նշանակում է, որ Շարժումը «եթե» իսկապես չի կարող ունենալ: Պատրաստվեք համառ ու գրագետ պայքարի՝ անհատապես բոլորիս անմիջական մասնակցությամբ», - գրել է նա:

ՍԱՐԿԱՎԱԳՆԵՐԻՆ ԱԿՑԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿ ՏԱՐԱՆ

«Սա նախերգանքն է լինելու, էլ մեր դեմն էլ առնել չկա: Ոստիկանությունը թող իմանա»,- հայտարարեց Բագրատ Սրբազանը՝ ոստիկանների կողմից ԱԳՆ շենքի դիմաց խաղաղ անհնազանդության ակցիա իրականացնող քաղաքացիների վրա հարձակվելուց հետո:

Նա հայտարարեց, որ գլխավոր պատասխանատուն «ստախոս վախկոտն է»:

«Սեւ բերետավորներն ինձ էլ են խփել: Լրագրողին էլ են ծեծել: Կապ չունի, այսօր մենք ԱԳՆ բոլոր աշխատակիցներին հռչակում ենք թուրք-ադրբեջանական գործակալ, համացանցը ամբողջ հեղեղում եք, առաջին հերթին Արարատ Միրզոյանի նկարոց: Ոստիկանությունը թող իմանա, սա նախերգանքն է: Ձեր պարտականությունները կատարեք օրենքով, ոչ թե պաշտպանեք վախկոտին: Մենք կմնանք այստեղ, ուզում է ձյուն գա, ուզում է անձրեւ գա: Օր ու արեւ չենք տալու»,-ասաց Սրբազանը:

Նա հայտարարեց, որ սարկավագներին են տարել, ոստիկաններին հորդորեց՝ բերեն տղաներին:

ՈՍՏԻԿԱՆԸ ՀԱՐՎԱԾԵԼ Է

«Ես նկատեցի, որ 4 հոգով ձերբակալում են քաղաքացիներին եւ տեսա, որ ոստիկաններից մեկը հարվածեց»: Այս մասին երեկ՝ մայիսի 31-ին ԱԳՆ-ի դիմաց լրագրողների հետ զրույցում ասաց փաստաբան Ռուբեն Մելիքյանը, ով հեւում էր:

«Ես պնդեցի, որ ներս թողնեն ինձ: Այդ պահին հանդարտ էր իրավիճակը: Հավաստիացած ենք, որ ճանապարհին բռնության չեն ենթարկում:

Ոստիկաններն իրենց հերթին պնդում են՝ որ ինչ-որ մեկն իրենց բզով խփել է: Ես ասում եմ, ով բզով խփել է ոստիկանին, սադրիչ է, սրիկա է եւ կապ չունի այս շարժման հետ, եթե այդպիսի բան կա:

Բայց ես իմ աչքով տեսա, որ ոստիկաններից մեկը հարվածում էր տղաներից մեկին: Մի հոգու ինքնազգացողությունը վատացավ, սրտի խնդիր ուներ՝ Սարգիս Բալայան. Խնդրում եմ փաստաբան ուղարկել կենտրոնի բաժին»,- ասաց նա:

Նշենք, որ երեկ ԱԳՆ-ի դիմաց իրավիճակը լարվեց, բախում սկսվեց ոստիկանների ու ցուցարարների միջեւ: Ոստիկանները սկսեցին բերման ենթարկել քաղաքացիներին: «Ազգային ճակատի» փոխանցմամբ՝ ԱԳՆ շենքի դիմաց բախման ժամանակ Բագրատ Սրբազանին սեւ բերետավորները ոտքով հարվածներ են հասցրել:

«Կարմիր բերետավորները հոգեւորականների են բերման ենթարկել եւ ծեծել ԱԳՆ դիմաց անցկացվող հավաքը լուսաբանող լրագրողներից ոմանց: Ոստիկանների բիրտ եւ անհամաչափ ուժի կիրառման արդյունքում քաղաքացիների ինքնազգացողությունը վատացել է: Քաղաքացիներին հարվածներ են հասցրել նաեւ մահակներով: Ոստիկանները բերման են ենթարկել հոգեւորականների»,-նշում է «Ազգային ճակատը»:

ԵԿԵՂԵՑՈՒՆ ՀԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կարծում եմ՝ այն, ինչ ենթադրում է կրոնական նպատակ, չպետք է հարկվի, այն, ինչ օտարվում է, դրա դիմաց գումար է գանձվում, այդտեղ ավելորդ չէ մտածել» - այս մասին երեկ՝ մայիսի 31-ին, լրագրողների հետ ճեպազրույցում ասաց ՊԵԿ նախագահ Ռուստամ Բադասյանը՝ անդրադառնալով Եկեղեցու հարկելու հնարավորությանը:

«Եթե հավատացյալը ցանկանում է հանգանակություն անել առանց հաստեավորման, այդտեղ խնդիր չկա, իսկ եթե ինչ-որ մի պարագա վաճառվում է շահույթ ստանալու նպատակով, կարծում եմ՝ ակնհայտ է, որ պետք է հարկվի»,- ասաց Բադասյանը:

Բադասյանը տեղեկացրեց, որ այս պահին հարկային օրենսգրքով սահմանված են հարկային արտոնություններ որոշակի ծիսական պարագաների օտարման մասով, անշարժ գույքի հարկի արտոնություններ են սահմանված:

Նա հայտնեց, որ եկեղեցու հարկման վերաբերյալ որեւէ նոր նախագիծ չկա:

ՔՊ ԹԵԿՆԱԾՈՒՆ ԸՆՏՐՎԵԼ Է ՓԱՐԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ

ՔՊ պատգամավոր Վահագն Ալեքսանյանը սոցցանցի իր էջում գրում է. «Փարաքար համայնքում ավագանու անդամների 11 կողմ ձայներով համայնքապետ ընտրվեց «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության կողմից առաջադրված թեկնածու Լյուդվիգ Գյուլնազարյանը:

Հիշեցնենք, որ 2,5 տարի առաջ կայացած ընտրությունների արդյունքով «Քաղաքացիական պայմանագիրն» ու «Դավիթ Մինասյան» դաշինքը կոալիցիոն հուշագիր էին կազմել, համաձայն որի համայնքի կառավարումն իրականացվելու էր 2,5 տարի Դավիթ Մինասյանի եւ 2,5 տարի Լյուդվիգ Գյուլնազարյանի կողմից:

Շնորհավորում եմ պարոն Գյուլնազարյանին եւ մաղթում արդյունավետ աշխատանք»:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԸ

Ադրբեջանը Հայաստանից ակնկալում է ականապատ դաշտերի «ճշգրիտ քարտեզներ». այս մասին լրագրողներին հայտնել է Ադրբեջանի նախագահի՝ հատուկ հանձնարարություններով ներկայացուցիչ Էլչին Ամիրբեկովը:

«Ակնկալում ենք, որ Հայաստանը ճշգրիտ տվյալներ կներկայացնի մեր պահանջի համաձայն: Սա կարող է դիտվել նաեւ որպես երկու կողմի միջեւ վստահության հիմնարար միջոց»,- ասել է նա:

Ամիրբեկովը նշել է, որ ականների վերաբերյալ հայկական կողմի տրամադրած տեղեկատվությունը շատ «անորակ է եւ ցածր մակարդակի»:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ԱՆՏԵՍՈՒՄ ԵՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻՆ

ԱՀ մարդու իրավունքների պաշտպան Գեղամ Ստեփանյանը հայտարարություն է տարածել. «Հարգելի՛ հայրենակիցներ, Արցախից բռնի տեղահանությունից հետո բազմաթիվ արցախցիներ դիմում են՝ հստակ տեղեկություն ստանալու կուտակային կենսաթոշակային համակարգով կուտակած գումարների ճակատագրի վերաբերյալ: Խոսքն ընդհանուր առմամբ մոտ 17 մլրդ դրամի եւ մոտ 34,5 հազար շահառուի մասին է:

Հաշվի առնելով խնդրո առարկայի վերաբերյալ արցախցիների շրջանում բարձր հետաքրքրվածությունը՝ մեր կողմից իրականացվել են ուսումնասիրություններ, որոնք հանգում են հետեւյալին՝

- 2024 թ. հունվարի 16-ին Արցախի Հանրապետության Ազգային ժողովը լրացում է կատարել «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքում, որով հնարավորություն է ստեղծվել մասնակիցների համար կուտակված միջոցները իրենց ցանկությամբ փոխանցելու այլ կուտակային կենսաթոշակային համակարգում բացված հաշվին, կամ էլ հետ ստանալու՝ փոխանցելով այն իրենց բանկային հաշիվներին: 2024 թ. փետրվարի 29-ին ԱՀ կառավարության որոշմամբ հաստատվել է վերոնշյալ օրենքից բխող համապատասխան ընթացակարգը:

- Հարցի շուրջ Արցախի կառավարությունը քննարկումներ է ունեցել շահագրգիռ կառույցների՝ ՀՀ կենտրոնական բանկի, «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի եւ ֆոնդի կառավարիչ «Ջեներալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ?ի հետ, որոնց կողմից եւս որեւէ խոչընդոտ գործընթացի իրականացման տեսանկյունից չի ներկայացվել:

- Ըստ էության՝ Արցախի Հանրապետության համապատասխան մարմինների եւ շահագրգիռ այլ կառույցների կողմից ապահովվել է անհրաժեշտ բոլոր իրավական ընթացակարգերը, որոնք ԱՀ քաղաքացիներին հնարավորություն են տալիս կամ հետ ստանալու կուտակված միջոցները, կամ էլ դրանք փոխանցելու ՀՀ կուտակային համակարգում գործող այլ ֆոնդի: Ըստ օրենքի՝ գործընթացը պետք է ավարտվեր 2024 թվականի նոյեմբերին:

- Սակայն 2024 թվականի մայիսին ՀՀ կառավարությունը հանդես է եկել օրենսդրական նախաձեռնությամբ՝ համաձայն որի նախատեսվում է, որ կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցը, իր դիմումի համաձայն, կարող է իր կուտակած միջոցները տեղափոխել ՀՀ կենսաթոշակային կուտակային համակարգ, իսկ համապատասխան դիմումի բացակայության դեպքում, միջոցները տեղափոխվելու են օրենքի ուժով:

- Փաստորեն ՀՀ կառավարության առաջարկած նախագծով հնարավորություն չի ստեղծվում կուտակված միջոցները մասնակցին վերադարձնելու համար, այլ միայն սահմանվում է, որ դիմումի առկայությամբ կամ առանց դրա կուտակված գումարները փոխանցվելու են ՀՀ կուտակային կենսաթոշակների համակարգում գործող այլ ֆոնդի:

Ըստ էության՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը, փաստացիորեն չունենալով որեւէ լիազորություն կուտակված գումարների ճակատագրի տնօրինման մասով, շրջանառվող օրենքի նախագծով փորձում է ներդրումային ֆոնդի գումարները տեղափոխել ՀՀ կենսաթոշակային ֆոնդ՝ զրկելով կուտակային համակարգի մասնակցին սեփական միջոցները տնօրինելու հնարավորությունից:

Հայաստանի Հանրապետության կառավարության համար արդեն ընդունված վարքագիծ է դարձել բռնի տեղահանվածներին վերաբերող հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնել առանց պատշաճ հանրային քննարկման, առանց ներառականություն ապահովելու՝ անտեսելով առնվազն իրենց վերաբերող հարցերի շուրջ լսված լինելու իրավունքը»:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԵՐՔՈՒՄ Է ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը օրերս Ազգային Ժողովում հայտարարեց, որ կարծում է՝ եկել է ժամանակը՝ Հայ առաքելական եկեղեցին պիտի հարկվի:

«Մենք պետք է հասկանանք՝ հարկային այն պարտավորությունները, որոնք բոլորի համար առկա են, եկեղեցու հանդեպ ինչո՞ւ չի կիրառվում: Ես կարծում եմ, որ մոտ ժամանակներում պետք է քննարկենք այս հարցը»,- ասել է ԱԺ նախագահը:

Սիմոնյանի խոսքով՝ եկեղեցին մոմ, գինի, կոկա-կոլա է ծախում, հարստանում է, բայց հարկ չի վճարում:

Այսօր Ազգային Ժողովի հանձնաժողովներում շարունակվում է ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության նախնական քննարկումները:

Քննարկման ընթացքում ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի նախագահ Ռուստամ Բադասյանը հայտարարեց, որ եկեղեցին վճարում է հարկեր:

Հավելենք նաեւ, որ Հայաստանյաց առաքելական սուրբ եկեղեցին արդեն մի քանի տարի է հազար խոշոր հարկատուների շարքում է:

Ավելին, ըստ ՊԵԿ-ի հրապարակումների, 2023 թվականի վերջին 1000 խոշոր հարկ վճարողների կողմից 2023թ. հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում Հայաստանյաց առաքելական սուրբ եկեղեցին զբաղեցրել է 768-րդ տեղը եւ վճարել է 435 մլն 405 հազար դրամ գումար:

Ստացվում է, որ ՊԵԿ նախագահ Ռուստամ Բադասյանը հերքում է ԱԺ նախագահի՝ ՀՀ ամենաբարձ ամբիոնից հնչեցրած ամպագոռգոռ հայտարարությունները:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԿՄԵԿՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ

Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը մայիսի 29-ին կարգադրություն է ստորագրել, որում ասված է.

«Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով եւ հաշվի առնելով Ազգային ժողովի նախագահի 2024 թվականի մայիսի 29-ի Կ-155-Ա կարգադրությունը՝ կարգադրում եմ.

1. 2024 թվականի հունիսի 3-6-ը Ազգային ժողովի նախագահի պարտականությունների ժամանակավոր կատարումը հանձնարարել Ազգային ժողովի նախագահի տեղակալ Հակոբ Արշակյանին»:

Ավելի վաղ հայտնել էինք, որ ԱԺ նախագահի գլխավորած պատվիրակությունը պաշտոնական այցով 2024 թվականի հունիսի 3-6-ը կգործուղվի Լյուբլյանա:

ՊԱՏՐԱՍՏ Է ՕԳՆՈՒԹՅԱՆ ՁԵՌՔ ՄԵԿՆԵԼ

Հայաստանի իշխանությունները դրական են արձագանքել հանրապետությունում տեղի ունեցած ջրհեղեղի հետ կապված ռուսական կողմի օգնության առաջարկին:

Այս մասին ճեպազրույցի ժամանակ հայտարարել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան՝ նշելով, որ Մոսկվան, որպես Երեւանի դաշնակից, միշտ պատրաստ է օգնության ձեռք մեկնել՝ ելնելով հանրապետության կարիքներից:

«Մենք եւս մեկ անգամ մեր ցավակցությունն ենք հայտնում աղետի հետեւանքով զոհվածների ընտանիքներին եւ ընկերներին, իսկ տուժածներին մաղթում ենք շուտափույթ ապաքինում»,- ասել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչը:

ՏՎՅԱԼՆԵՐ

526 ԿԵՂԾ ԲԺՇԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐԵՐ

Պարզվել են «Հանրապետական անձավաբուժական կենտրոն» ՓԲ ընկերության տնօրենի եւ երկու աշխատակիցների կողմից, նախնական համաձայնությամբ, փաստաթղթերի կեղծմամբ, առանձնապես խոշոր չափերով խարդախություն կատարելու դեպքերի հանգամանքները:



Դեռեւս 2022թ. ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում նախաձեռնված, հետագայում ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում քննված քրեական վարույթի շրջանակներում կատարված քննությամբ պարզվել է, որ 2017-2022թթ. ընկած ժամանակահատվածում ՓԲ ընկերության առանձին աշխատակիցներ սոցիալապես անապահով եւ հատուկ (առանձին) խմբերում ընդգրկված 20 անձանց տվյալներով կազմել են 526 կեղծ բժշկական պատմագրեր, որոնք որպես պետական պատվերի շրջանակներում մատուցված բժշկական ծառայություններ, մուտքագրել են ՀՀ ԱՆ էլեկտրոնային առողջապահության «ԱՐՄԵԴ» համակարգ եւ պետական բյուջեից խաբեության եւ վստահությունը չարաշահելու եղանակով ստացել եւ հափշտակել են առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուր շուրջ 4գ5 մլն ՀՀ դրամ գումար:

Վարույթի շրջանակներում ՀՀ առողջապահության նախարարությունից ստացվել են ՓԲ ընկերությունում պետպատվերի շրջանակներում «Սոցիալապես անապահով, հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրով «ԱՐՄԵԴ» էլեկտրոնային առողջապահության համակարգով փոխհատուցման ներկայացված բժշկական օգնության եւ սպասարկման ընդհանուր այդ 20 անձանց վերաբերյալ թվով 526 դեպքերի տվյալները:

Համադրելով ՀՀ ՍԷԿՏ համակարգից արտատպված վերոգրյալ անձանց սահմանահատումների վերաբերյալ տվյալների հետ, պարզվել է, որ որոշ դեպքերում անձինք առհասարակ բացակայել են ՀՀ-ից, սակայն նրանց կենսաչափական տվյալներով պետպատվերի շրջանակներում մատուցվել են բժշկական ծառայություններ:

Նախաքննության ընթացքում ընկերությունից առգրավվել եւ զննության են ենթարկվել վերոհիշյալ 20 անձանց վերաբերյալ բժշկական պատմագրերը:

Պարզվել է, որ որոշ դեպքերում էլ անձինք նշված կենտրոնում բուժում ստացել են, սակայն ոչ թե «Արմեդ» համակարգ մուտք կատարած ժամանակահատվածում, այլ՝ նույն տարվա ընթացքում՝ այլ ամիսների եւ օրերի:

Անհամապատասխանություններ են ի հայտ եկել նաեւ բուժվող անձանց պատմագրերում նշված բուժման օրերի եւ «Արմեդ» համակարգ մուտքագրման օրերի միջեւ:

Նախաքննության ընթացքում պետությանը պատճառված վերոնշյալ վնասն ամբողջությամբ վերականգնվել է:

Նախաքննությունը շարունակվում է:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄ

Խաչատուր Ռուբենի Խնձրցյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով պաշտոնատար անձ, զբաղեցնելով Շիրակի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչության պետի պաշտոնը, 2023 թվականի դեկտեմբերի 29-ին իր աշխատասենյակում՝ Արտակ Համլետի Հարությունյանի հետ տեղի ունեցած հանդիպման ընթացքում, վերջինիցս ստացել է 300.000 ՀՀ դրամ կաշառքի գումար՝ «Ույուտ Սենթր» ՍՊ ընկերության եւ Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի միջեւ 2023 թվականի մարտի 30-ին կնքված թիվ «ՇՄԱՀ-ԳՀԱԾՁԲ-23/16» ծածկագրով պայմանագրի շրջանակներում իրականացված՝ ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի Տոնականյան 38-րդ բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգման աշխատանքների ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտի ստորագրման եւ կնքման գործընթացը՝ իր ծառայողական լիազորություններով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով իրականացնելու համար:

Մկրտիչ Ասատրյանին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդված 2-րդ մասի 1-ին կետով եւ ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդված 2-րդ մասի 1-ին կետով, այն արարքների համար, որ նա, հանդիսանալով պաշտոնատար անձ, զբաղեցնելով Շիրակի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետի պաշտոնը, 2 դրվագով խմբի կազմում ստացել է ընդհանուր՝ 70.000 ՀՀ դրամ կաշառքի գումարներ:

Գործով նախաքննության ավարտ է հայտարարել եւ այն ուղարկվել է դատարան:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

1 ՏՈՆՆԱ ԿՈԿԱԻՆԻ ԳՈՐԾԻ ՄԱՍԻՆ

ԱԱԾ պահեստազորի սպաների միությունը հայտարարություն է տարածել. «Այսօր հրապարակվեց, որ մեկ տոննա կոկաինի մաքսանենգության գործով կալանավորված բոլոր անձինք ազատ են արձակվել:

Ժամանակին այս գործը խիստ քաղաքականացվեց Ազգային ժողովի ամբիոնից՝ կապելով Միհրան Պողոսյանի անձի հետ, այդ կերպ ներկայացնելով, թե իբր նախկիններն առնչվում են թմրամիջոցի ապօրինի շրջանառությանը:

Դեռեւս 2023 թվականի հունիսի 28-ի հրապարակմամբ ՀՀ ԱԱԾ պահեստազորի սպաների միությունը վերլուծության էր ենթարկել մաքսանենգության այս դեպքը եւ հանգել հետեւության, որ մեկ տոննա կոկաինը նախատեսված չի եղել Հայաստան ուղարկելու համար, այն մաքսավորների հետ հանցավոր համաձայնությամբ հանվելու էր Իտալիայում, եւ բեռն արդեն մաքուր, առանց թմրամիջոցի, առաքվելու էր Հայաստան, ինչը սակայն խաթարվել է մեզ դեռեւս անհայտ պատճառով: Այսինքն՝ «Մրգենի» ՍՊ ընկերությունն օգտագործվել է «կուրորեն»:

Ցավոք, մեկ տարի առաջ արված այդ վերլուծությունը պարզապես հաշվի չառնվեց, այլապես մարդիկ, այդ թվում եւ նրանց մեջ կին, այսքան ժամանակ կալանքի տակ չէին պահվի նման ծանր մեղադրանքով:

Չպետք է ամեն ինչ քաղաքականացնել, հարմարեցնել քաղաքական նպատակներին: Պրոֆեսիոնալ հարթակում, հատկապես ԱԱԾ-ում, դա ընդունելի չի եղել: Համակարգն ունեցել է իր դեմքը, խոսքի կշիռը, եւ այն հաշվի է առնվել»:

ԼՈՒՐԵՐ

ՊԱՀԱՆՋՈՒՄ Է ԲՌՆԱԳԱՆՁԵԼ ՇՈՒՐՋ 20 ՄԼՐԴ ԴՐԱՄ

Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի մայիսի 23-ին վարույթ է ընդունել Գլխավոր դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հերթական հայցադիմումը:

Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը պահանջ է ներկայացրել դատարանին՝ ՀՀ Ազգային ժողովի նախկին պատգամավոր, բնապահպանության նախկին նախարար Վարդան Այվազյանից եւ նրան փոխկապակցված անձանցից բռնագանձել՝

3 անշարժ գույք.

2 տրանսպորտային միջոց.

8 իրավաբանական անձանցում մասնակցություններ, բաժնեմասեր եւ բաժնետոմսեր.

2 տրանսպորտային միջոցի միջին շուկայական արժեքին համարժեք գումար.

2 մլրդ 632 մլն 342 հազար դրամ, որը չի հիմնավորվում անձի օրինական եկամուտներով, ունի ապօրինի ծագում, փոխանցվել է բարեխիղճ ձեռքբերողի կամ հնարավոր չէ նույնականացնել եւ բռնագանձել.

18 մլրդ 593 մլն 643 հազար դրամ՝ որպես ապօրինի ծագում ունեցող գույքի օգտագործումից ստացված եկամտի մնացորդ.

Շուրջ 101 մլն դրամի չափով տրված փոխառության պահանջի իրավունք:

ԲԱՎԱՐԱՐԵԼ Է ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանի իրավասու մարմինը բավարարել է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության միջնորդությունը եւ հետախուզվող անձ Ս.Մ.-ին հանձնել Հայաստանի իրավասու մարմիններին: Այդ մասին հայտնում են Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունից:

Ս.Մ.-ն մեղադրվում է ապօրինի ձեռք բերած, հրազեն հանդիսացող ինքնաձիգով 2019 թվականի սեպտեմբերի 4-ին շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, դիտավորությամբ ապօրինաբար երկու եւ ավելի անձանց կյանքից զրկելու փորձի եւ Հայաստանի Հանրապետության պահպանվող պետական սահմանը ապօրինի հատելու համար:

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հանձնարարությամբ՝ Ներքին գործերի նախարարության ոստիկանության աշխատակիցների կողմից ապահովվել է Ս.Մ.-ի տեղափոխումը Երեւան:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մայիսի 29-ից 30-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 92 դեպք, որից 1-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՊԱՐՏԱԴՐԵԼ Է ԾԱԽԵԼ ԿՐԿԵՍԻ ՏՈՄՍԵՐԸ

Տավուշի մարզպետը Հայկ Ղալումյանը մարզի հանրակրթական դպրոցների տնօրեններին պարտադրել է , որ նրանք աշակերտներին վաճառեն էկզոտիկ կենդանիներ ցուցադրող շրջիկ կրկեսի ելույթների տոմսերը: Իր հերթին Դիլիջան համայնքի Հաղարծին գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն Գոհար Թամամյանը դպրոցի դասղեկներին պարտադրել է 5-8-րդ դասարանների աշակերտներին 1000 դրամով վաճառել շրջիկ կրկեսի տոմսերը: Որոշ ծնողներ ընդդիմացել են, զայրացած գնացել են Հաղարծնի դպրոց, հայտնել, որ իրենց երեխան օձերից վախ ունի, ալերգիա ունի էկզոտիկ կենդանիների հանդեպ: Հաղարծնի շատ ծնողներ սոցիալապես վատ վիճակում են, նրանց համար տոմսի 1000 դրամը քիչ փող չէ, սակայն Գոհար Թամամյանից վախեցել են, ուստի բողոքել են լրագրողիս: Հաղարծնի դպրոցի դասղեկների, ուսուցիչների չաթում տնօրեն Գոհար Թամամյանը զգուշացում է արել դասղեկներին, հայտնելով. «Հաղարծնի միջն. դպրոցում մայիսի 17-ին էկոզոտիկ կենդանիների ցուցադրություն է լինելու; Մարզի բոլոր դպրոցներում իրականացվել է բարձր մակարդակով՝ մարզպետի գրության հիման վրա; 5-րդ դասարաններից մինչեւ 8-րդ դասարանները պարտադիր մասնակցում են, չմասնակցելու դեպքում դասղեկների գումարից պահվելու է, դասղեկի պարտականությունների մեջ է: Մարզպետարանին հաշվետվություն պետք է տանք»: Հետո Գ. Թամամյանը դասղեկներին հայտնել է, որ մարզպետարանից զանգել են՝տոմսերի վաճառքի վիճակը ճշտելու համար, պատվիրել է հետեւել տոմսերի վաճառքի վիճակին, նրանց նախատել է ,որ կարգին դասղեկություն չեն անում, դասամատյանները ճիշտ չեն լրացնում, սպառնացել է դասղեկների անունները հայտնել ԿՋՆԱԿ: Մեր Լրագրողի ձեռքի տակ է նաեւ Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների տնօրեններին Տավուշի մարզպետարանի գլխավոր քարտուղար Արման Գեւորգյանի գրությունը, որտեղ նա «Մադագասկար» շարժական կենդաբանական այգու գովազդն է արել, որ այդ կրկեսը երեխաների սերն է առաջացնում կենդանիների հանդեպ, Ա. Գեւորգյանը հայտնել է, որ երեխաները կարող են կերակրել կենդանիներին, նկարվել նրանց հետ: Մարզպետարանի գլխավոր քարտուղարը մարզպետարանի ենթակա դպրոցների տնօրեններին խնդրելէ տրամադրել համապատասխան տարածք, աջակցել միջոցառման գործընթացին: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը եւ մարզպետարանի պաշտոնյաներն իրենց պաշտոնական դիրքը չարաշահելով, դպրոցների տնօրեններին պարտադրել են մասնավոր բիզնես շրջիկ կրկեսին դպրոցում տարածք տրամադրել, պարտադրանքով աշակերտներին տոմսեր ծախել, ինչը օրենքով անթույլատրելի է: Անթույլատրելի է նաեւ դպրոցի տնօրեն Գոհար Թամամյանի սպառնալիք-պարտադրանքը դասղեկներին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

«42 ԵՐԵՎԱՆ»

ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ ՍՏԱՑԵԼ ԵՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ

Ծրագրավորման միջազգային դպրոցի առաջին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանն այսօր «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնում մասնակցել է «42 Երեւան» ծրագրավորման միջազգային դպրոցի առաջին շրջանավարտների ավարտական միջոցառմանը:

Կրթական հիմնական ծրագիրը հաջողությամբ ավարտել է 73 շրջանավարտ, որոնց ավելի քան 80 տոկոսն արդեն աշխատում է SS ոլորտի տարբեր ընկերություններում: Կենտրոնն այս պահին ունի 200-ից ավելի ակտիվ սովորողներ:

Ողջունելով շրջանավարտներին եւ շնորհավորելով այս նշանակալի իրադարձության կապակցությամբ՝ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը կարեւորել է պետության համար գերակա ուղղություններից մեկի՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում կրթական եւս մեկ հետաքրքիր ծրագիր ունենալու՝ Թումոյի ընձեռած հնարավորությունը:

«Վստահ եմ՝ ձեզնից յուրաքանչյուրը բազմաթիվ դժվարությունների եւ փորձությունների միջով է անցել այս փուլին հասնելու համար: Միջազգային նմանօրինակ կրթական ծրագրի շրջանավարտ հանդիսանալն, իսկապես, կարեւոր ձեռքբերում է: Անկասկած, թե՛ տեղական, թե՛ միջազգային աշխատաշուկայում լայն հնարավորություններ կունենաք:

Կարծում եմ՝ SS ոլորտի զարգացման ուղղությամբ մեր երկրում իրականացվող բազմաթիվ ծրագրերի շարքում «42 Երեւանը» ունի իր ուրույն տեղն ու կարեւոր դերակատարությունը»,- նշել է Արաքսիա Սվաջյանը:

Կենտրոնը բաց է օրը 24 ժամ՝ շաբաթը 7 օր, իսկ ուսուցման ծրագրի ժամանակացույցը կազմվում է սովորողի ընտրությամբ:

«Շրջանավարտներն այս կրթական ծրագրի շրջանակում մասնագիտական գիտելիքներ ու կարողություններ են ստացել ոչ միայն տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում, այլեւ զարգացրել են բազմաթիվ հմտություններ, որոնք կարեւոր են թե՛ աշխատանքային միջավայրում փոխհարաբերությունների եւ հաջող կարիերայի ձեւավորման, թե՛ նաեւ որպես քաղաքացի արդյունավետ գործունեության ծավալման տեսանկյունից»,- համոզմունք է հայտնել Արաքսիա Սվաջյանը:

Միջոցառմանը մասնակցել եւ շրջանավարտներին ավարտական վկայականներ են հանձնել նաեւ Հայաստանում ԵՄ պատվիրակության համագործակցության բաժնի ղեկավար Ֆրանկ Հեսը, «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի զարգացման գլխավոր տնօրեն Պեգոր Փափազյանը եւ այլք:

Հայաստանում ԵՄ պատվիրակության համագործակցության բաժնի ղեկավար Ֆրանկ Հեսը ողջունել է շրջանավարտներին եւ հետագա հաջողություններ մաղթել նրանց: Ֆրանկ Հեսն ընդգծել է՝ ԵՄ-ն ուրախ է աջակցել Հայաստանի կրթության համակարգին, մասնավորապես՝ հանրակրթության բարեփոխումներին:

Միաժամանակ, Հայաստանում ԵՄ պատվիրակության համագործակցության բաժնի ղեկավարը ԵՄ բյուջետային աջակցության շրջանակում կարեւորել է նաեւ ոչ ֆորմալ կրթության զարգացումը, որի լավագույն օրինակներից է «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը:

«42 Երեւանը» ծրագրավորման անվճար դպրոց է, որի նպատակն է կրթել ոլորտի ապագա մասնագետներին: Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող ԵՄ Թումո ինժեներական եւ կիրառական գիտությունների գլխավոր նախագծերից մեկի՝ Թումո լաբորատորիաների մաս կազմող կենտրոնն իր տեղն է գտել ֆրանսիական առաջատար 42 ծրագրավորման դպրոցների ցանցում, որում արդեն իսկ ընդգրկված են Սեուլի, Ռիո դե Ժանեյրոյի, Մոսկվայի, Ամստերդամի եւ աշխարհի 26 այլ քաղաքների ծրագրավորման կենտրոններ:

Երեւանը ծրագրին միացել է 2020 թվականին՝ աշխատաշուկայի համար SS ոլորտի բարձրակարգ մասնագետներ ապահովելու առաքելությամբ:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՍՊԱՍՈՒՄ ԵՆ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ

ՀՈՒՆԻՍԻԵԿՅԱՆ ՄԻՔՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Երեխաների պաշտպանության միջազգային օրը՝ հունիսի 1-ին, ՀՀ ԳԱԱ Արմեն Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի Երեւանի բուսաբանական այգում երեխաների համար կանցկացվեն մի շարք միջոցառումներ:

Ժամը 12:00-ին կբացվի «Բնության դեսպաններ» խորագրով բնապահպանական ցուցահանդեսը, որի կազմակերպիչներն են «ՀՀ ԳԱԱ Արմեն Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ը եւ «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամը:

Ցուցահանդեսի նպատակն է համախմբել բնապահպանական կրթությամբ զբաղվող կազմակերպություններին եւ դպրոցներին՝ստեղծելով հարթակ հետագա համագործակցության համար:

Կլինեն ազգային պարեր, երեխաների համար ազգային պարերի ուսուցում, ազգային խաղեր, բնապահպանական աշխատարաններ (միջատների հյուրանոց, ծառերի ձեւավորում, պատվաստ, գիտափորձեր, «երկրորդ կյանք» թափոնին, կանաչ ապրելակերպի խրախուսում), բնապահպանական ֆիլմերի ցուցադրություն, թեմատիկ քննարկումներ եւ դասախոսություններ:

Հունիսի 1-ին Երեւանի բուսաբանական այգու մուտքն անվճար է:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 15 պատահար. 30 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ԱԿՑԻԱՅԻ ԱՎԱՐՏԻՆ ՄՆԱՑ 2 ՇԱԲԱԹ

Հայէկոնոմբանկի Visa Business քարտապանների համար նախատեսված ակցիայի ավարտին մնացել է 2 շաբաթ: Ակցիայի շրջանակներում VISA Business քարտի տարեկան սպասարկման վճարը սահմանվել է 5000 դրամ, իսկ կից քարտինը՝ 3000 դրամ:

AEB Visa Business քարտը ներկայացվել է նոր դիզայնով եւ տալիս է մի շարք առավելություններ՝

- AEB Online համակարգի անվճար սպասարկում (առանց անվտանգության կոդի)
- 50% զեղչ բանկային հաշվի բացման համար

Անվճար աշխատավարձային քարտեր 10+ աշխատակիցների եւ 50% զեղչ մինչեւ 10 աշխատակիցների դեպքում

50% զեղչ ղեկավար անձանց VISA Platinuշ եւ VISA Infinite քարտերի տրամադրման համար

2% cashback միջազգային անկանխիկ վճարումների դիմաց (ոչ ավել, քան ամսական 15,000 դրամ)

4% cashback Ran Oil բենզալցակայանների ցանցում ակցիայի ընթացքում

3% մշտական Cashback TravelOne տուրիստական կազմակերպության կողմից

եւ այլ բազում առավելություններ

Առաջարկը գործում է մինչեւ հունիսի 14-ը:

Ակցիայի մանրամասներին կարող եք ծանոթանալ Հայէկոնոմբանկի կայքէջում, որտեղ կարող եք թողնել հայտ. Բանկի մասնագետը կապ կհաստատի 1 աշխատանքային օրվա ընթացքում:

AEB Visa Business քարտ. ճիշտ ընտրություն բիզնեսի համար:

ԿԵՆՏՐՈՆԸ ՀԱՄԱԼՐՎԵԼ Է ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍԱՐՔԵՐՈՎ

ՀՀ ԱՆ այրվածքաբանության եւ մաշկաբանության ազգային կենտրոնի մանկական վերակենդանացման բաժանմունքը Հունիսի 1-ի՝ երեխաների պաշտպանության միջազգային օրվան ընդառաջ, համալրվել է եվրոպական եւ ամերիկյան արտադրության գերժամանակակից բուժսարքավորումներով: Բարերար Կարեն Վարդանյանի նվիրատվության շնորհիվ կենտրոնն ունի վիրահատական եւ բուժքույրական նոր սեղաններ, անեսթեզիոլոգիայի 2 սարք, դեֆիբրիլյատոր, բրոնխոսկոպ, վիդեոլարինգոսկոպ, ուլտրաձայնային համակարգ, միկրովիրաբուժական մանրադիտակ, ավտոմատ իմունոֆերմենտային վերլուծիչ եւ այլ սարքավորումներ: Մանկական վերակենդանացման բաժանմունքի համար ձեռք բերված 21 սարքի համար բարերար Կարեն Վարդանյանը տրամադրել է 118 մլն դրամ:

«ԿԻԲԵՌԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՇԱԲԱԹ»

ԱՄՓՈՓՎԵՑԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2024 թ. մայիսի 18-26-ը «Կիբեռանվտանգության շաբաթ» միջոցառման շրջանակներում Կենտրոնական Բանկը, Հայաստանի Տեղեկատվական Համակարգերի Գործակալության աջակցությամբ, երրորդ տարին անընդմեջ կազմակերպել էր «CyberGEN 2024» համաժողովը:

Նշենք, որ հիշյալ համաժողովը, ինչպես նաեւ հերթական «BSides Yerevan 2024» միջոցառումը, «Կիբեռանվտանգության շաբաթ»-ի հիմնական բաղկացուցիչներն են, իսկ շաբաթն ամփոփեց առաջին խոշոր «Bug Bounty»-ն, որը խրախուսում է երիտասարդ եւ փորձառու մասնագետներին իրենց գիտելիքներով ու փորձով նպաստել մեր երկրում թվային լուծումների անվտանգ զարգացմանը:

CyberGEN2024 համաժողովի նպատակն է երիտասարդ մասնագետների շրջանում մեծացնել հետաքրքրությունը կիբեռանվտանգության նկատմամբ, ինչպես նաեւ խթանել գիտելիքների, հմտությունների եւ փորձի փոխանակումը եւ աջակցել կիբեռանվտանգության ոլորտում նոր կապերի ձեւավորումը:

ԿԲ նախագահի տեղակալ Արմեն Նուրբեկյանն իր բացման խոսքում նշեց, որ վերջին տարիների տեխնոլոգիական առաջընթացի շնորհիվ ակնհայտ է դարձել, որ ցանկացած պետության համար կիբեռանվտանգությունը պետական, մասնավոր, մասնավորապես՝ ֆինանսական համակարգին սպառնացող հիմնական եւ կարեւորագույն ռիսկերից է:

Գլոբալ տեսանկյունից այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են կազմակերպությունների խոցելիությունը, կիբեռ գիտելիքների եւ մասնագետների մեծ պակասն ու բիզնեսների ու կիբեռանվտանգության համատեղելիությունը, արագ եւ համապարփակ լուծման կարիք ունեն:

CyberGEN2024 համաժողովի օրակարգում ընդգրկված էին երկու հիմնական ուղղություններ. կառավարման, ռազմավարական եւ կիբեռանվտանգության ռիսկերի շուրջ թեմաներ, ինչպես նաեւ խորը տեխնիկական թեմաներ, որոնք ներառվել են համաժողովի մասնակիցների շրջանում արված հարցումների արդյունքներով:

Համաժողովին ելույթ ունեցան խոսնակներ այնպիսի հայտնի կազմակերպություններից, ինչպիսիք են. Trellix, Amazon Web Services, SimSpace, OpenText Cybersecurity, Google Cloud, CQURE, Կասպերսկի, F5 եւ այլն, իսկ ընդհանուր մասնակիցների քանակը կազմում էր շուրջ 350 հոգի՝ պետական եւ մասնավոր հատվածներից, բազմաթիվ ուսանողներ եւ դասախոսներ, ինչպես նաեւ մի շարք եվրոպական երկրների կենտրոնական բանկերի ներկայացուցիչներ:

Մայիսի 25-26-ը կիբեռանվտանգության շաբաթն ամփոփեց «Bug Bounty» միջոցառումը, որի արդյունքներով պրոդուկտի, լուծման կամ համակարգի սեփականատերերը պարգեւատրում են իրենց պրոդուկտներում, լուծումներում կամ համակարգերում կարեւոր խնդիրներ գտած անձանց՝խրախուսելով ինչպես երիտասարդ, այնպես էլ փորձառու մասնագետներին իրենց գիտելիքներով ու փորձով նպաստել մեր երկրում թվային լուծումների անվտանգ զարգացմանը:

Մասնակից «հաքերային» թիմերը պետք է փորձեին մուտք գործել եւ գտնել համակարգերի խոցելիությունները: Թիմերի միջեւ պայքարը տեւեց 24 ժամ, որի ընթացքում երեսունից ավել մասնագետներ տասը թիմերով պայքարում էին առաջին տեղի համար:

Լավագույն հինգ թիմերն ստացան դրամական պարգեւներ՝ գործընկերների աջակցությամբ սահմանված մրցանակային ֆոնդից:

Այս տարի «Bug Bounty»-ին ներկայացված էին պետական նշանակության երկու համակարգեր, ինչպես նաեւ ԱԿԲԱ բանկի առցանց բանկինգ համակարգը եւ մոբայլ հավելվածը:

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԱԼԵՏԱՅԻՆ ԵՐԵԿՈՅԻ ՀՈՎԱՆԱՎՈՐ

«Բալետ 2021» հիմնադրամի նախաձեռնությամբ եւ «Ֆասթ» բանկի աջակցությամբ հունիսի 15-ին՝ժամը 19:00-ին Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում տեղի կունենա Շառլ Ազնավուրի «Լա Բոհեմ» եւ Միշել Լեգրանի «Շերբուրգյան հովանոցներ» բալետային ներկայացումների առաջնախաղը՝ նախատեսված բոլոր սերունդների ներկայացուցիչների համար:

«Շերբուրգյան հովանոցներ» բալետը Միշել Լեգրանի արդեն սիրված երաժշտության ժամանակակից մեկնաբանությունն է՝ սյուժեի, պարի եւ բեմական հագուստի յուրահատուկ ձեւավորմամբ: Իսկ «Լա Բոհեմ»՝ դեռեւս 2017 թվականին բեմադրված բալետային ներկայացումը, ստեղծվել է մեծանուն շանսոնյե Շառլ Ազնավուրի 12 երգերի հիման վրա: Բալետի հայաստանյան առաջնախաղին ներկա է եղել նաեւ ինքը՝ լեգենդը: «Լա Բոհեմ»-ն Ազնավուրի կերպարի, անցած կյանքի եւ զգացմունքների այլաբանական արտապատկերումն է: Խորհրդանշական է, որ բալետը վերականգնվում է Ազնավուրի հոբելյանական տարում եւ լավագույնս կհամալրի նրա ծննդյան 100-ամյակին նվիրված միջոցառումների շարքը: Բալետային ներկայացումները բեմադրել է ՀՀ ժողովրդական արտիստ, ճանաչված բալետավար Ռուդոլֆ Խառատյանը:

«Ֆասթ» բանկի կողմից մշակութային նախագծերին աջակցությունը պարբերական բնույթ է կրում եւ Բադալյանների ընտանիքին պատկանող ընկերությունների խմբի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության կարեւոր մաս է:

«CYBERGEN». ԿԱՅԱՑԵԼ Է ԿՈՆՖԵՐԱՆՍ

Երեք տարի անընդմեջ Կենտրոնական բանկը Հայաստանում կազմակերպում է «CYBERGEN» կիբեռանվտանգության կոնֆերանս, որին մասնակցել են տեղեկատվական տեխնոլոգիաների եւ կիբեռանվտանգության ոլորտի բազմաթիվ փորձագետներ, համաշխարհային տարբեր ընկերությունների ներկայացուցիչներ:

Կոնֆերանսի հիմնական նպատակներից մեկը կիբեռանվտանգության ոլորտում երիտասարդ մասնագետների գիտելիքների, հմտությունների եւ փորձի փոխանակման զարգացումն ու բարելավումն է:

Այս տարի եւս «CYBERGEN» կոնֆերանսի հովանավորներից է Ակբա բանկը, որը մշտապես կարեւորել է հաճախորդների անձնական տվյալների պաշտպանությունն ու պահպանումը:

«Մեր առաջնային նպատակներից է ապահովել մեր հաճախորդների ֆինանսական անվտանգությունը, որի համար Ակբա բանկը մշտապես մեծ ռեսուրսներ է հատկացնում: Ֆինանսական համակարգում մեր բանկը միակն է, որը ստացել է ISO 27701 անձնական տվյալների կառավարման հավաստագիր: Սա նշանակում է, որ մեր հաճախորդների տվյալները պահպանվում եւ մշակվում են միջազգային լավագույն փորձին համապատասխան»,- նշել է Ակբա բանկի SS բաժնի ղեկավար Վաղարշակ Իսկանդարյանը:

«Այստեղ հավաքվել են Հայաստանի եւ աշխարհի 15 երկրների մասնավոր ու պետական կազմակերպությունների ներկայացուցիչներ, որպեսզի կարողանան թե՛ մեր ֆինանսական համակարգը, թե՛ պետական համակարգը դարձնել կայուն հարձակումների նկատմամբ: Պետք է նշեմ, որ տեխնոլոգիաները կատարյալ չեն եւ հնարավոր է լինեն թերություններ. բացարձակ անթերի տեխնոլոգիաներ այսօր եւ հետագայում եւս չեն կարող լինել, ուստի նման միջոցառումները մեծ նշանակություն ունեն առաջ գնալու եւ զարգանալու համար»,- նշել է Կենտրոնական բանկի SS եւ կիբեռանվտանգության տնօրեն Կոմիտաս Ստեփանյանը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

SUMMEET

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՄԱՌԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ

SUMMEET Հայաստանում ժամանակակից պարի միջազգային ամառային փառատոնն այս տարի կանցկացվի հունիսի 24-29-ը: Այն տեղի կունենա Երեւանում եւ Աշտարակում: 4-րդ SUMMEET-ին իրենց նախագծերն են ներկայացնում պարային ընկերություններ Ֆրանսիայից, Շվեյցարիայից, Ռուսաստանից, Ղազախստանից: Եվ, իհարկե, փառատոնի մարգարիտն է Armenian Showcase-ը՝ հայկական ցուցադրությունը, որն ի մի է բերում հայ ժամանակակից պարուսույցների լավագույն աշխատանքները:

SUMMEET միջազգային փառատոնի առաքելությունը՝ տարեցտարի մի այնպիսի հարթակի վերածվելն է, որ մի կողմից համաշխարհային ասպարեզ դուրս կբերի հայաստանյան ժամանակակից պարը, իսկ մյուս կողմից հայ արտիստներին եւ պարուսույցներին կծանոթացնի համաշխարհային ճանաչում ունեցող հեղինակներին եւ պարային ընկերություններին: Հենց այդ պատճառով էլ յուրաքանչյուր տարի SUMMEET-ը Հայաստան է բերում բացառիկ նախագծեր:

Փառատոնի մեկնարկը կտրվի հունիսի 24-ին Աշտարակում՝ Դրամատիկական թատրոնի բեմում, ղազախական Samruk թատրոնի ամենաժամանակակից եւ արդիական ներկայացմամբ: Այն կոչվում է Mutual Misunderstanding: Պարուսույցներ ու կատարողներ՝ Տոմիրիս Մետիբաեւա եւ Արտուր Գալիմուլլին:

Հունիսի 25-ի առավոտյան Երեւանի պարարվեստի պետական քոլեջում կմեկնարկեն փառատոնային վարպետության դասերը՝ հայ պարողների համար: Դրանք կշարունակվեն ամեն օր մինչեւ հունիսի 27-ը ներառյալ: Հատկապես յուրահատուկ է հունիսի 27-ին կայանալիք Մարթա Գրեհեմի տեխնիկայի վարպետության դասը, որը բացառիկ է իր տեսակով:

Հունիսի 25-ին Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնի բեմում կցուցադրվի Balmanukyan Dance Project-ի «Կոմիտասի երգերը. Revival» նախագիծը (Հայաստան/Ռուսաստան): Բեմադրությունը՝ Նատալյա Կասպարովայի (Ռուսաստան): Այս նախագիծն իրականացվում է Կասպարովայի՝ տարիներ առաջ արված լեգենդար բեմադրությամբ, որն առաջադրվել էր «Ոսկե դիմակ» մրցանակի:

Հունիսի 26-ին Թատերական ինստիտուտի բեմում կցուցադրեն «Ամեն ինչ կարգին է» պերֆորմանսը (Ռուսաստան): Պարուսույց՝ Կսենիա Բուրմիստրովա, կատարող՝ Լյուբով Պերովա: Նույն օրը կներկայացվի նաեւ ղազախական Mutual Misunderstanding-ը, ինչպես նաեւ Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտում տեղի կունանա դասախոսություն հայկական պարարվեստում օձերի սիմվոլիզմի մասին:

Հունիսի 27-ին Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտում կներեկայացվի PARIez francais նախագծի «VI» ներկայացումը (Ֆրանսիա/Հայաստան): Բեմադրությունը՝ Վալերիա Կասպարովայի եւ Ֆելիսիա Մոնոդի (Ֆրանսիա): Ներկայացումը Նախագիծն իրականացվել է ՀՀ-ում Ֆրանսիայի Հանրապետության դեսպանության եւ Ֆրանսիական ինստիտուտի աջակցությամբ: Նույն օրը կներկայացվի նաեւ ֆրանսիական նախագծի «Իրերի տարօրինակ կարգը» բեմադրությունը: Բեմադրիչ՝ Ֆելիցիա Մոնոդ:

Կանցկացվի նաեւ դասախոսություն ACTS ինստիտուտի եւ PARIez francais նախագծի մասին:

Փառատոնի մարգարիտն է Armenian Showcase-ը եւ Armenian Gala-ն: Այս երկու կարեւոր ծրագրերը SUMMEET- ի հիմքն են: Այս անգամ ծրագրերը հնարավորություն կլինի դիտել հունիսի 28-ին երեւանյան տարբեր բեմերում: Բացի այդ, այդ օրը կկայանա կլոր սեղան-քննարկում՝ նվիրված հայկական բալետի 100-ամյակին:

Հունիսի 29-ին կկայանա փառատոնային կարեւոր նախաձեռնություններից մեկը՝ փարիզյան ACTS պարային ակադեմիա ընդունվելու քասթինգը, որին կարող են մասնակցել հայ պարողները: Կանցկացվի նաեւ «Մարմինը եւ շարժումը ընկղմվող իրականության նոր տարածքում» խորագրով դասախոսություն: Իսկ Կինոյի տանը փառատոնի փակմանը՝ հունիսի 29-ին, հանրությունը կդիտի Cosmogony առցանց ներկայացումը (Շվեյցարիա): Բեմադրությունը՝ Ժիլ Ժոբենի: Այն առանձնահատուկ է նրանով, որ ներկայացվելու է Ժնեւում, իսկ մեզ մոտ ժամանակակից տեխնոլոգիաներով ցուցադրվելու է տեսաէկրանին՝ այլ իրականությունում:

Նշենք, որ փառատոնի կազմակերպիչներն են «Սարեր» մշակութային հասարակական կազմակերպությունը, Open Look փառատոնի հիմնադիր Վադիմ Կասպարովը, օպերային երգիչ Հայկ Վարդանյանը եւ Balmanukyan Dance Project պարային ընկերությունը:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԶԻՋԵԼ Է ԱՇԽԱՐՀԻ 1 45-ՐԴ ՌԱԿԵՏԻՆ

Հայկական արմատներով ռուսաստանցի թենիսիստ Կարեն Խաչանովը դուրս մնաց Ֆրանսիայի բաց առաջնությունից՝ «Ռոլան Գարոս»-ից:

«Մեծ սաղավարտի» տարվա 4 մրցաշարերից մեկի՝ «Ռոլան Գարոս»-ի, տղամարդկանց մենախաղի 2-րդ շրջանում մրցեց 145-րդ ռակետ սլովակ Յոզեֆ Կովալիկի հետ: 3,5 ժամ ձգված մրցախաղում Խաչանովը զիջեց 5 սեթերից հետո՝ 4:6, 4:6, 6:4, 6:3, 6:4 հաշվով:

Կարեն Խաչանովը պրոֆեսիոնալ թենիսիստների ասոցիացիայի (ATP) վարկանիշային աղյուսակում 17-րդն է: Նա 4 անգամ հաղթել է միջազգային ֆեդերացիայի հովանու ներքո անցկացվող մրցաշարում: Նա Տոկիոյի 32-րդ ամառային Օլիմպիական խաղերի արծաթե մեդալակիր է: Հայկական արմատներով ռուսաստանցի թենիսիստի լավագույն արդյունքը եղել է 2019 թվականին, երբ նա հասել է Rolan-Garros-ի քառորդ եզրափակիչ եւ 2021 թվականին՝ դարձյալ քառորդ եզրափակիչ Ուիմբլդոնում, իսկ 2022-ին նա հասավ US Open-ի կիսաեզրափակիչ: 2023 թվականին էլ Խաչանովը դուրս մնաց AusOpen-ի կիսաեզրափակիչից:

ԲԱՐԵՂԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ՊԱՐՏՎԵՑ

Հայաստանի ներկայացուցիչ Բարեղամ Հարությունյանը (51 կգ) Թաիլանդի մայրաքաղաք Բանգկոկում ընթացող բռնցքամարտի օլիմպիական վարկանիշային մրցաշարում պարտվեց եւ կորցրեց Փարիզ-2024-ի ուղեգիր նվաճելու վերջին հնարավորությունը: 35-ամյա բռնցքամարտիկը 1/16 եզրափակչում պարտվեց 23-ամյա չինացի Լյու Չաունին: Հարությունյանը պայքարը սկսել էր 1/32 եզրափակչից, որտեղ նոկաուտի էր ենթարկել թունիսցի մրցակցին:

ԲԱՐԴ ԽՄԲՈՒՄ ԵՆ ՀԱՅՏՆՎԵԼ

Ֆուտզալի Հայաստանի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Ռուբեն Նազարեթյանը խոսել է Եվրո-2026-ի որակավորման հիմնական փուլի վիճակահանության մասին:

«Բավականին բարդ խմբում ենք հայտնվել: Մրցակիցները, իրոք, ուժեղ են: Գիտեինք, որ հիմնական փուլում թույլ մրցակիցներ չեն լինում: Ղազախստանը Եվրոպայում վարկանիշով երրորդն է. մյուս երկուսը նույնպես բավականին լավ հավաքականներ են, բայց մենք ունենք ուժեղ թիմ եւ փորձելու ենք ամեն ինչ անել՝ Եվրոպայի առաջնության եզրափակիչ փուլում հայտնվելու համար»,- մարզչի խոսքերը մեջբերում է ՀՖՖ պաշտոնական կայքը:

2026 թ. Եվրոպայի առաջնության որակավորման հիմնական փուլում Հայաստանի հավաքականն ընդգրկվել էր 6-րդ խմբում եւ մրցելու է Ղազախստանի, Ալբանիայի ու Դանիայի թիմերի դեմ: Հիմնական փուլի հանդիպումները կայանալու են 2024 թ. դեկտեմբերի 9-ից 2025 թ. ապրիլի 16-ը:

ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ, ՀՈՒՇԱՐՁԱՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Սույն թվականի մայիսի 23-ին Լեհաստանի մայրաքաղաք Վարշավայում ստորագրվեց հուշագիր՝ հնագիտության, հուշարձանապահպանության եւ թանգարանագիտության ոլորտներում հայ-լեհական համագործակցության զարգացման վերաբերյալ:

Հուշագիրը ստորագրեցին Վարշավայի համալսարանի ռեկտոր Ալոյզի Նովակը, ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի տնօրեն Արսեն Բոբոխյանը, ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի տնօրեն Արմեն Հովհաննիսյանը եւ «Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, հայոց ազգագրության եւ ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրեն Կարեն Փահլեւանյանը: Միջոցառմանը ներկա էր Լեհաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Ալեքսանդր Արզումանյանը:

Այնուհետեւ տեղի ունեցավ աշխատաժողով՝ նվիրված երկաթեդարյա Հայաստանի խեցեղենի արտադրության, բաշխման եւ օգտագործման օրինաչափություններին: «Երկրագործությունը եւ սննդի սպառումը նախապատմական Հարավային Կովկասում» թեմայով հատուկ դասախոսությամբ հանդես եկավ ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի Հնակենսաբանության եւ էթնոկենսաբանության գիտահետազոտական խմբի ղեկավար Ռոման Հովսեփյանը:

● Հունիսի 2-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Զավեշտալի կատակերգություն հյուրանոցում» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2000-3000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Հաշմանդամ երեխային կամ 1-ին խմբի հաշմանդամին խնամելու ժամանակաշրջանը հաշվառվո՞ւմ է աշխատանքային ստաժում: Եվ կցանկանայի նաեւ տեղեկանալ՝ երեխային խնամելու ժամանակահատվածը ինչպես է հաշվառվում աշխատանքային ստաժում:

Երանուհի Հակոբյան (32 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ե. Հակոբյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ անհրաժեշտ աշխատանքային ստաժի առկայության դեպքում հաշմանդամ երեխայի խնամակալության ժամանակաշրջանը մինչեւ երեխայի 18 տարին լրանալը կամ առաջին խմբի հաշմանդամին խնամելու ժամանակաշրջանը հաշվառվում է ծնողի, որդեգրողի, խնամակալի աշխատանքային ստաժում, եթե նա ունի խնամարկյալի հաշմանդամության ժամանակահատվածը հաստատող տեղեկանք, իսկ խնամակալի դեպքում՝ նաեւ խնամակալ ճանաչված լինելու եւ խնամակալության ժամանակահատվածի մասին տեղեկանքներ, սակայն տասը տարուց ոչ ավելի՝ մինչեւ կենսաթոշակ նշանակելն ընկած ժամանակահատվածում:

Սահմանված աշխատանքային ստաժի առկայության դեպքում աշխատանքային ստաժում հաշվառվում են նաեւ ծնողներից մեկի՝ մինչեւ յուրաքանչյուր երեխայի երկու տարին լրանալը երեխային խնամելու ժամանակահատվածը՝ վեց տարուց ոչ ավելի: Մեկ օրացուցային տարվա համար չի կարող հաշվարկվել մեկ տարուց ավելի աշխատանքային ստաժ՝ բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի:

Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կենսաթոշակի չափը հաշվարկելիս (վերահաշվարկելիս) աշխատանքային ստաժի հանրագումարի մեջ (տարի, ամիս, օր) մինչեւ 6 ամսվա (180 օրվա) ժամանակահատվածը չի հաշվառվում, իսկ 6 ամսվանից ավելի ժամանակահատվածը հաշվառվում է որպես մեկ տարվա ստաժ:

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ՝ եթե ՀԿ-ն ֆիզիկական անձին կրթաթոշակ է տալիս, արդյոք եկամտային հարկի պարտավորություն առաջանում է, թե ոչ:

Մանվել Սիրադեղյան (52 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 18 կետի համաձայն՝նվազեցվող եկամուտներ են համարվում բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներին, ասպիրանտներին, միջնակարգ-մասնագիտական ու պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնական հաստատությունների սովորողներին, հոգեւոր ուսումնական հաստատությունների ունկնդիրներին պետության կողմից վճարված կրթաթոշակները, ինչպես նաեւ այն կրթաթոշակները, որոնք նրանց համար նշանակում են այդ ուսումնական հաստատությունները կամ նշված հոդվածի 1-ին մասի 14-րդ եւ 15-րդ կետերում նշված կազմակերպությունները:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Այսինքն՝ ՀԿ-ի կողմից ֆիզիկական անձին նշանակված կրթաթոշակը նվազեցվող եկամուտ է հանդիսանում, եւ եկամտային հարկի պարտավորություն չի առաջանում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝«Ժողովուրդ» օրաթերթի

«Ժողովուրդ» օրաթերթի տեսախցիկը ֆիքսել էր, թե ինչպես է ԿԳՄՍ փոխնախարար Դանիել Դանիելյանը, պատուհանից գաղտնի նկարահանում է ԱԳՆ եւ ԿԳՄՍ շենքի մոտ հավաքված ցուցարարներին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+2 + 6 +14 + 18
Կոտայքի լեռներ	+2 + 6 +13 + 16
Կոտայքի նախալեռներ	+8 + 11 +19 + 21
Գեղարքունիք	+2 + 5 +13 + 17
Լոռի	+3 + 5 +13 + 16
Տավուշ	+7 + 10 +17 + 19
Արագածոտնի լեռներ	+2 + 4 +12 + 14
Արագածոտնի նախալեռներ	+7 + 11 +19 + 23

Արարատ	+9 + 12 +22 + 24
Արմավիր	+8 + 11 +22 + 24
Վայոց ձորի լեռներ	+2 + 5 +13 + 15
Վայոց ձորի նախալեռներ	+9 + 11 +22 + 24
Սյունիքի հովիտներ	+8 + 12 +18 + 21
Սյունիքի նախալեռներ	+4 + 8 +14 + 17
ԼՂՀ	+5 + 9 +14 + 16
Երեւան	+16 + 18 +21 + 23

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **31.5.2024**
Հասցեն՝ Գերաբերունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*